



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 44

16 ապրիլի 2012 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Կոմունիստական Կուսակցության կողմից Մարալիկի Հաղթանակի պուրակի հուշաղբյուրի մոտ հանրային հավաք անցկացնելու մասին և համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Հավաքների ազատության մասին օրենքի 6-րդ, 7-րդ, 11-րդ, 21-րդ հոդվածների

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Կոմունիստական Կուսակցության կողմից Մարալիկի Հաղթանակի պուրակի հուշաղբյուրի մոտ 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության շրջանակներում 2012 թվականի ապրիլի 18-ին ժամը 16⁰⁰-ին հանրային հավաք անցկացնելու մասին իրազեկումը ընդունելի գիտություն:
2. Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին որոշումն անհապաղ տեղեկացնել կազմակերպիչներին և ոստիկանությանը, ինչպես նաև այդ որոշումը փակցնել քաղաքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:
3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքապետարանի վարչական շենքում այն փակցնելու պահից:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ